

ուած տեղին մէջ կը կարծուի թէ գտնուած է Յեսուի գերեզմանը: Դ. դարու աւանդութեան ներկայացուցիչներուն՝ Եւսեբիոսի եւ Յերոնիմոսի վկայութիւնները նպաստաւոր են այս կարծիքին (Bar. gd. էջ 321, 327) մասին:

Ճիճնէհի մէջ կը պատմուի հետեւեալ աւանդութիւնը. Ճիճնեցի մը Յիսուս Քրիստոսի Չարչարանաց Ժամանակ Երուսաղէմ կը գտնուի. Չատկէն յետոյ իր զիւղը կը վերադառնայ և կը պատմէ իր հայրենակիցներուն՝ կնոջը ներկայութեան որ աքաղաղ մը կը փետտէր, այն բոլոր հրաշքները զոր Յիսուս կատարած էր, ինչպէս նաև այն պարագաները որ կը վերաբերէին անոր Մահուան և Յարութեան: Ամէնքն ալ ի սկզբան հաւատացին իր խօսքին, բայց երբ պատմեց թէ միւսկոյն Յիսուսը Հրեաներու կողմէ խաչը հանուած՝ սպաննուած և ճշմարտապէս յարութիւն առած էր, կինը պատասխանեց անոր և ըսաւ. ինչ որ պատմեցիր անհաւատալի է, եթէ նոյն իսկ այս իմ փետտած աքաղաղը այս վայրկեանիս ողջըննայ դարձեալ չէ կարելի հաւատալ: Իսկոյն աքաղաղը կենդանացաւ ու փախաւ կնոջ ձեռքէն: Կինը, կ'ըսէ աւանդութիւնը, թռչունը կարենալ բռնելու համար վազեց մինչեւ լերան մը գլուխը: Նոյն պատճառաւ այս լեռը կը կոչուի Սփաղաղիկ լեռը (Ճէպէլ Էտ-Տիք) (Ham. մասն Գ. էջ 21):

3. Նապլուսի աւանդութիւնները. — Աւետարանէն կը սորվինք թէ Սամարացիները նոյն իսկ Փրկչին բերնէն լսեցին կենաց բանին քարոզութիւնը եւ շատերը հաւատացին: Ս. Փիլիպպոս յաջողութեամբ քարոզեց Աւետարանը Սամարիոյ շրջակայքը: Ս. Պետ-